

# Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակում

Մեթոդական գրություն 22 – Պահանջ 2.5

---

## Բովանդակություն

1. Ներածություն.....	2
2. Թեմային առնչվող պահանջներ.....	3
3. Իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի բովանդակության նկատմամբ պահանջներ.....	5
4. Իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզ մշակելու ցուցումներ.....	7
4.1 Քննարկում, թե ինչպես իրական սեփականատերերի բացահայտումը կարող է աջակցել ազգային բարեփոխումների գերակայություններին.....	7
4.2 Իրական սեփականության բացահայտման ինստիտուցիոնալ շրջանակի քննարկում.....	8
4.3 Քննարկում, թե ինչպես մշակել «իրական սեփականություն» եզրի սահմանումը.....	9
4.4 Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հաշվետվողականության պարտավորությունների քննարկում.....	11
4.5 Բացահայտման ենթակա տվյալների մանրամասնեցման մակարդակ.....	13
4.6 Տվյալների հավաքագրման ընթացակարգերի քննարկում.....	14
4.7 Տվյալների ճշգրտության ապահովման նպատակով մեթոդաբանության մշակման քննարկում.....	15
4.8 Տվյալների ժամկետայնության քննարկում.....	16
4.9 Տվյալների հասանելիության քննարկում.....	18
4.10 Կարողությունների զարգացման կարիքների քննարկում.....	18
4.11 Տեխնիկական և ֆինանսական աջակցության կարիքների քննարկում.....	19
4.12 Ճանապարհային քարտեզում ներառված գործողությունների վերջնաժամկետների և պարտականությունների քննարկում.....	20
5. Գրականություն.....	20
Annex A: Advisory checklist for beneficial ownership roadmap.....	21

# 1. Ներածություն

Արդյունահանող ոլորտից ստացվող պետության եկամուտների վերաբերյալ թափանցիկությունը կարևոր է հաշվետվողականության համար, սակայն քիչ բան է ասում՝ թե ում են պատկանում հանքարդյունաբերական ընկերությունները և ով է ի վերջո շահում այդ ընկերությունների գործունեությունից: Նավթ, գազ և հանքային նյութեր արդյունահանելու իրավունք ձեռք բերած ընկերությունների իրական սեփականատերերի ինքնությունը հաճախ անհայտ է՝ թաքնված լինելով իրավաբանական անձանց անվերահսկելի մի շղթայում: Այս խնդիրն ազդում է այլ ոլորտների վրա և հաճախ նպաստում է կոռուպցիայի աճին ու հարկերից խուսափելուն: Հարուստ բնական պաշարներ ունեցող երկրներում ապրող մարդիկ վնասներ կրելու ռիսկ ունեն, քանի որ արդյունահանվող ակտիվները շատ հաճախ կոռուպցիայի պատճառով սխալ են բաշխվում:

2016 թ. ԱՃԹՆ-ի ստանդարտի (2.5 դրույթ) ընդունմամբ ԱՃԹՆ-ը համաձայնել է, որ 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ նախաձեռնությունն իրականացնող բոլոր երկրները պետք է ապահովեն, որ արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած իրավաբանական անձինք բացահայտեն իրենց իրական սեփականատերերին: Բացի այդ, քաղաքական ազդեցություն ունեցող անձինք, ովքեր հանդիսանում են իրական սեփականատերեր, ևս պետք է բացահայտվեն: Խորհուրդ է տրվում, որ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի դառնա հանրային ռեգիստրների միջոցով: Այդ տեղեկատվությունն առնվազն պետք է ներառվի երկրի ԱՃԹՆ-ի զեկույցում կամ էլ զեկույցը պետք է պարունակի հղում՝ դեպի շահառուների առցանց տեղեկատվական հարթակ: Որպեսզի ապահովվի, որ անհրաժեշտ նախապատրաստական քայլերը եւ բարեփոխումները ձեռնարկվել են, իրականացնող երկրներից նաև պահանջվում է համաձայնեցնել և հրապարակել իրենց իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզները մինչև 2017 թվականի հունվարի 1-ը:

Լայն աջակցություն վայելող արդյունավետ ճանապարհային քարտեզների մշակումը կարևոր է՝ իրական սեփականատերերի առնչությամբ ԱՃԹՆ-ի ներկայացրած պահանջների հաջող իրագործման համար:

Այս գրությունը փորձում է ուղղորդել բազմաշահառու խմբին (ԲՇԽ) ճանապարհային քարտեզ մշակելու գործում՝ ընդգծելով տասներկու խնդիրները, որ պետք է հաշվի առնվեն: Ճանապարհային քարտեզի մշակումը և դրանում նախանշված գործողությունների հետագա իրականացումը, ըստ էության, պահանջում են լայնածավալ խորհրդակցություններ նախարարությունների և գերատեսչությունների,

ընկերությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ: Հնարավոր է անհրաժեշտ լինի զգալի տեխնիկական և ֆինանսական աջակցություն: Մշակող գործընկերների սերտ համակարգումն անհրաժեշտ է՝ ապահովելու համար, որ առկա է համապատասխան ֆինանսավորում և աջակցություն ինչպես ճանապարհային քարտեզ մշակելու, այնպես էլ դրա իրականացման համար:

## 2. Թեմային առնչվող պահանջներ

### 2.5 Իրական սեփականություն

- ա) Խորհուրդ է տրվում, որ իրականացնող երկրները վարեն հանրության համար հասանելի՝ արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած իրավաբանական անձի (անձանց) իրական սեփականատերերի ռեգիստր՝ ներառելով իրենց իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնությունը (ինքնությունները), սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում սեփականության իրավունքը կամ իրականացվում հսկողությունը: Հնարավորության դեպքում, ընկերությունների կողմից իրական սեփականության վերաբերյալ տեղեկությունները պետք է ընդգրկվեն ընկերությունների կողմից՝ արդյունահանող ճյուղերը կանոնակարգող մարմիններին, ֆոնդային բորսաներին և լիցենզավորման գործընթացի լիազոր գործակալություններին ներկայացվող փաստաթղթերում: Այն դեպքերում, երբ այս տեղեկությունները հանրությանը հասանելի են, ԱՃԹՆ-ի զեկույցի մեջ պետք է ներառվի ցուցում այն մասին, թե ինչպես գտնել այդ տեղեկատվությունը:
- բ) Պահանջվում է, որ.
- i. ԱԹՃՆ-ի զեկույցի մեջ արձանագրվեն շահառու սեփականության բացահայտման վերաբերյալ կառավարության քաղաքականությունը և ԲՇԽ-ի քննարկումները: Այստեղ պետք է ներառվեն համապատասխան իրավական դրույթների մանրամասները, բացահայտման առկա կարգերը և իրական սեփականության բացահայտմանն առնչվող պլանավորված կամ իրականացման փուլում գտնվող բոլոր բարեփոխումները:
  - ii. մինչև 2017 թվականի հունվարի 1-ը ԲՇԽ-ը հրապարակի իրական սեփականության մասին տեղեկությունների բացահայտման ճանապարհային քարտեզը՝ ստորև ներկայացված «գ)»-«զ)» կետերին համապատասխան: Ճանապարհային քարտեզում ԲՇԽ-ն

պետք է սահմանի բոլոր ուղենիշները և վերջնաժամկետները, ինչպես նաև գնահատի ճանապարհային քարտեզի իրականացումը՝ որպես ԲՇԽ-ի տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մաս:

գ) 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ պահանջվում է, որ իրականացնող երկրները հարցում անեն, իսկ ընկերությունները բացահայտեն իրական սեփականության մասին տեղեկությունները՝ ԱՃԹՆ-ի զեկույցի մեջ դրանք ներառելու նպատակով: Սա վերաբերում է արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած իրավաբանական անձի (անձանց), նաև պետք է նշվեն իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնությունը (ինքնությունները), սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում սեփականության իրավունքը կամ իրականացվում հսկողությունը: Իրական սեփականության մասին տեղեկությունների ներկայացման գործընթացում տեղ գտած բոլոր բացթողումները և թերացումները պետք է բացահայտվեն ԱՃԹՆ-ի զեկույցի մեջ, այդ թվում՝ նշելով այն բոլոր կազմակերպությունների անվանումները, որոնք չեն ներկայացրել իրական սեփականության մասին ամբողջական տեղեկատվություն կամ ներկայացրել են մասամբ: Այն դեպքում, երբ երկիրը, սահմանադրական կամ կիրարկման էական խոչընդոտների պատճառով չի կարողանում ապահովել այս պահանջի իրականացումը մինչև 2020 թվականի հունվարի 1-ը, կարող է ընտրել հարմարեցված իրականացման տարբերակը՝ 8.1 պահանջին համապատասխան:

դ) Իրական սեփականատիրոջ ինքնության մասին տեղեկություններում պետք է ներառվեն իրական սեփականատիրոջ անունը, քաղաքացիությունը և բնակության երկիրը, ինչպես նաև նշվեն քաղաքական ազդեցություն ունեցող անձանց անունները: Նաև խորհուրդ է տրվում, որ բացահայտվեն հանրային ծառայությունների համարանիշը, ծննդյան ամսաթիվը, բնակության կամ ծառայողական հասցեն և նրա հետ կապի միջոցները:

ե) ԲՇԽ-ը պետք է համաձայնության գա մասնակից ընկերությունների հետ կապված այնպիսի մոտեցման հարցում, որը հնարավորություն կտա ապահովելու նրանց կողմից տրամադրվող իրական սեփականության մասին տեղեկությունների ճշգրտությունը: Կազմակերպություններին կարող է պահանջ ներկայացվել՝ ստորագրելու իրական սեփականության հայտարարագիրը իրենց բարձրաստիճան ղեկավար թիմի անդամի կամ ավագ իրավախորհրդատուի կողմից կամ ներկայացնելու հիմնավորող փաստաթղթեր:

զ) «Իրական սեփականության» սահմանումը.

- i. Ընկերության «իրական սեփականատերը» այն ֆիզիկական անձն (անձինք) է, ում ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է կամ ում հսկողության ներքո գտնվում է տվյալ իրավաբանական անձը:
  - ii. ԲՇԽ-ը պետք է համաձայնության գա «իրական սեփականատեր» եզրի պատշաճ սահմանման հարցում: Սահմանումը պետք է համահունչ լինի վերոնշյալ «գ» կետի «(i)» ենթակետին, ներառի սեփականության շեմը (շեմերը), ինչպես նաև սահմանման մեջ պետք է հաշվի առնվեն միջազգային նորմերն ու համապատասխան ազգային օրենսդրությունը: Սահմանման մեջ պետք է նշվեն նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հաշվետվողականության պարտավորությունները:
  - iii. Բորսայում գրանցված ընկերությունները, ներառյալ՝ մայր ձեռնարկությանն ամբողջությամբ պատկանող դուստր ձեռնարկությունները, պետք է բացահայտեն ֆոնդային բորսայի անվանումը և ներկայացնեն համապատասխան բորսաներում առկա փաստաթղթերի հղումները:
  - iv. Համատեղ ձեռնարկությունների դեպքում տվյալ համատեղ ձեռնարկության յուրաքանչյուր կազմակերպություն պետք է բացահայտի իր իրական սեփականատիրոջը (սեփականատերերին), եթե այդ կազմակերպությունը չի հանդիսանում բորսայում գրանցված ընկերություն կամ բորսայում գրանցված ընկերությանն ամբողջությամբ պատկանող դուստր ձեռնարկություն: Յուրաքանչյուր կազմակերպություն պատասխանատու է իր կողմից տրամադրվող տեղեկությունների ճշգրտության համար:
- է) ԱՃԹՆ-ի զեկույցի մեջ պետք է նաև բացահայտվեն այդպիսի ընկերությունների օրինական իրավական սեփականատերերը և սեփականության մասնաբաժինը:

### **3. Իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի բովանդակության նկատմամբ պահանջներ**

ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է, որ «մինչև 2017 թվականի հունվարի 1-ը ԲՇԽ-ը հրապարակի իրական սեփականության մասին տեղեկությունների բացահայտման

ճանապարհային քարտեզը՝ ստորև ներկայացված «գ)»-«զ)» կետերին համապատասխան: Ճանապարհային քարտեզում ԲՇԽ-ն պետք է սահմանի բոլոր ուղենիշները և վերջնաժամկետները, ինչպես նաև գնահատի ճանապարհային քարտեզի իրականացումը՝ որպես ԲՇԽ-ի տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մաս» (Պահանջ 2.5.բ.ii):

Դա նշանակում է, որ ճանապարհային քարտեզը պետք է պարունակի հետևյալը.

1. Գործողությունները, թե ինչպես է կառավարությունը ապահովելու, որ «արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած իրավաբանական անձը (անձինք) բացահայտի «իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնությունը (ինքնությունները), սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում սեփականության իրավունքը կամ իրականացվում հսկողությունը» (Պահանջ 2.5.գ):

2. Գործողություններ, որ անհրաժեշտ են ապահովելու համար, որ «իրական սեփականատիրոջ ինքնության մասին տեղեկությունները ներառում են իրական սեփականատիրոջ անունը, քաղաքացիությունը և բնակության երկիրը, ինչպես նաև նշվեն քաղաքական ազդեցություն ունեցող անձանց անունները» (Պահանջ 2.5.դ):

3. Այն քայլերը, որ ԲՇԽ-ը կձեռնարկի՝ քննարկելու և «համաձայնության գալու մասնակից ընկերությունների հետ կապված այնպիսի մոտեցման հարցում, որը հնարավորություն կտա ապահովելու նրանց կողմից տրամադրվող՝ իրական սեփականության մասին տեղեկությունների ճշգրտությունը» (Պահանջ 2.5.ե):

4. Ցանկացած գործողություններ, որ անհրաժեշտ են «իրական սեփականության» սահմանման, սեփականության շեմերի, համատեղ ձեռնարկությունների բացահայտումների և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հաշվետվողականության պարտավորությունների վերաբերյալ ԲՇԽ-ի քննարկումները և որոշումները համապատասխան տեղեկություններով ապահովելու համար (Պահանջ 2.5.զ):

5. Ճանապարհային քարտեզով նախատեսվող գործողությունների իրականացման համար ուղենիշներ և վերջնաժամկետներ, ինչպես նաև պլաններ ճանապարհային քարտեզի իրականացման գնահատման համար (որպես ԲՇԽ-ի տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մաս) (Պահանջ 2.5.բ.ii):

Ճանապարհային քարտեզը կարող է նաև նշել ցանկացած գործողություն՝ ուղղված իրական սեփականատերերի բացահայտման որևէ խոչընդոտ հասցեագրելուն: «Այն դեպքում, երբ երկիրը սահմանադրական կամ կիրարկման զգալի խոչընդոտների պատճառով չի կարողանում ապահովել իրական սեփականատերերի հետ կապված պահանջի իրականացումը մինչև 2020 թվականի հունվարի 1-ը, կարող է ընտրել հարմարեցված իրականացման տարբերակը» (Պահանջ 2.5.զ):

Իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի մանրակրկիտ պլանները, քայլերը և գործողությունները կախված են յուրաքանչյուր երկրի տեղական հանգամանքներից: Որոշ դեպքերում երկրները կարող են որոշել, որ վերոնշյալին հասնելու համար, հնարավոր է, օրենսդրության վերլուծության և (կամ) օրենսդրական կամ կարգավորիչ փոփոխությունների իրականացման անհրաժեշտություն առաջանա: Կարող են առաջանալ կարողությունների զարգացման կարիքներ: Որոշ երկրներ կարող են ցանկանալ բարեփոխել իրավաբանական անձանց կամ թույլտվությունների առկա ռեգիստրները՝ նպատակ ունենալով դրանցում ներառել սեփականատերերի մասին տեղեկություններ: Երկրները կարող են տեխնիկական և ֆինանսական աջակցության կարիք ունենալ: Բոլոր նշված գործողությունները կարող են ճանապարհային քարտեզներում սահմանված նպատակների մաս հանդիսանալ:

## **4. Իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզ մշակելու ցուցումներ**

Հիմնվելով իրական սեփականատերերի պիլոտային ծրագրի և այլ միջազգային փորձից քաղած դասերի հիման վրա՝ հետևյալ բաժինը նախատեսված է ուղղորդելու ԲՇԽ-ը՝ հաշվի առնելու այն հարցերը, որոնք, ամենայն հավանականությամբ, տեղին կլինեն իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի համար:

### ***4.1 Քննարկում, թե ինչպես իրական սեփականատերերի բացահայտումը կարող է աջակցել ազգային բարեփոխումների գերակայություններին***

ԱՃԹՆ-ի ստանդարտը նշում է, որ ԲՇԽ-ը պետք է սահմանի «ԱՃԹՆ-ի իրականացման նպատակները, որոնք կապված են ԱՃԹՆ-ի սկզբունքներին և արտացոլում են ազգային առաջնահերթություններն արդյունահանող ճյուղերում» (Պահանջ 1.5.ա): Արդյունահաման ծրագրերը կարող են մեծ եկամուտներ բերել թե արդյունահանող ընկերություններին, և թե կառավարություններին: Շատ դեպքերում նման ծրագրերն իրականացվում են պատասխանատու ընկերությունների կողմից, որոնք ունեն անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական կարողություններ՝ արդյունահանող ակտիվները մշակելու համար: Սակայն փորձը, ցավոք, նաև ցույց է տվել, որ շատ դեպքերում, մասնավորապես, երբ կառավարումը թույլ է, նավթի և հանքանյութերի արդյունահանման իրավունքները կարող են տրվել համապատասխան կոմպետենտություն չունեցող ընկերությունների: Այդ ընկերություններին կարող է թույլ տրվել մուտք գործել հանքարդյունաբերության ոլորտի եկամտաբեր ծրագրեր, քանի որ նրանց տերերը քաղաքական կապեր ունեն,

կամ այն պատճառով, որ դրանց սեփականատերերը պատրաստ են զբաղվել կասկածելի գործարքներով, որոնք ուղղված են քիչ թվով մարդկանց համար արագ շահույթ առաջացնելուն՝ լայն հասարակության շահերին նպաստելու փոխարեն: Գնահատվել է, որ զարգացող երկրները տարեկան շուրջ 1 տրիլիոն ԱՄՆ դոլար են կորցնում՝ կոռուպացված կամ անօրինական գործարքների արդյունքում, որոնցից շատերում ընդգրկված են անանուն ընկերություններ<sup>1</sup>: Իրական սեփականատերերի բացահայտումը կօգնի նվազեցնել ֆինանսական չարաշահումների ռիսկը:

Իրական սեփականության թափանցիկությունը կարող է օգնել կանխարգելել կոռուպցիան արդյունահանման գործարքներում, նպաստել ընկերության ներսում տրանսֆերային գնագոյացման կանխմանը և հարկերից խուսափելուն, ինչպես նաև բարելավել ներդրումային միջավայրը: **ԲՇԽ-ը կարող է ցանկանալ սկսել իրական սեփականության և ճանապարհային քարտեզի պլանավորման իր քննարկումը՝ սահմանելով իրական սեփականության բացահայտման արդիականությունն ազգային բանավեճերի համար և գերակայությունները՝ ուղղված արդյունահանման ոլորտի առկա մարտահրավերների լուծմանը:** Արդիականության վաղ սահմանումը կարող է նպաստել փոխըմռնման կառուցմանն այն հարցում, թե ինչպես իրական սեփականատերերի մասին բացությունը կարող է օգտակար լինել երկրի համար, այս աշխատանքներում շահառու կողմերից աջակցություն ստանալու և ապահովելու համար, որ ԲՇԽ-ի ճանապարհային քարտեզի գործողությունները կապված են կառավարության ավելի ընդհանուր առաջնահերթություններին:

#### **4.2 Իրական սեփականության բացահայտման ինստիտուցիոնալ շրջանակի քննարկում**

ԱՃԹՆ-ի ստանդարտը պահանջում է, որ «արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած իրավաբանական անձը (անձինք)» բացահայտի իրական սեփականատերերի ինքնությունը (ինքնությունները): Այս նպատակին հասնելու համար **խորհուրդ է տրվում, որ ճանապարհային քարտեզը ներառի պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ լայն քննարկումներին ուղղված գործողություններ, որոնց արդյունքում կբացահայտվի այն գործակալությունը (գործակալությունները), որը պատասխանատու է կամ առավել հարմար է իրական սեփականության մասին տեղեկատվության վերահսկման, հավաքման և պահպանման համար, ինչպես նաև կհստակեցվեն պետական մարմիններին տեղեկատվության տրամադրման արդեն գոյություն ունեցող գործընթացները , որոնք կարող են օժանդակել իրական սեփականության բացահայտմանը:** Որպես

<sup>1</sup> <http://www.one.org/international/policy/trillion-dollar-scandal/>



օրինակ՝ կարող է անհրաժեշտ լինել ընկերությունների գրանցման ժամանակ նրանց կողմից ներկայացվող տեղեկատվության առկա պահանջների վերանայում և (կամ) փոփոխություններ՝ իրական սեփականության վերաբերյալ տեղեկատվությունը ներառելու համար, ինչպես նաև արդյունահանման նախագծերի հայտամրցույթի գործընթացներում և թույլտվությունների ռեգիստրում իրական սեփականատերերի բացահայտման հետ կապված պահանջների ընդգրկման քննարկումներ:

Իրական սեփականության վերաբերյալ ԱՃԹՆ-ի պիլոտային ծրագիրը ցույց տվեց, որ երկրների մեծ մասում իրական սեփականության հայեցակարգը չի ընդգրկվում գործող օրենսդրության մեջ, ինչը ենթադրում է իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական խոչընդոտների առկայության ցածր հավանականություն: Միևնույն ժամանակ, պիլոտային ծրագրի մեջ ընդգրկված շատ երկրներ եզրակացրել են, որ լիազորություններ նախատեսող օրենսդրությունը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի իրական սեփականության բացահայտման պահանջներին առավել լավ համապատասխանություն: Թեև լիազորություններ նախատեսող օրենսդրությունը պարտադիր չէ, **ԲՇԽ-ը կարող է ցանկանալ քննարկել, թե արդյոք ճանապարհային քարտեզը պետք է ներառի օրենսդրության վերլուծություն, մասնավորապես պարզելու համար իրական սեփականության բացահայտման պահանջներն ազգային օրենսդրության մեջ ամրագրելու հնարավորությունները, հատկապես, երբ համապատասխան օրենսդրական և կարգավորիչ ոլորտի բարեփոխումներն արդեն իսկ ծրագրված կամ ընթացքի մեջ են:**

#### ***4.3 Քննարկում, թե ինչպես մշակել «իրական սեփականություն» եզրի սահմանումը***

ԱՃԹՆ-ի ստանդարտը սահմանում է «իրական սեփականտիրոջը» ընկերության առնչությամբ որպես «ֆիզիկական անձ (անձինք), ում ուղղակիորեն կամ անուղղակիորեն, պատկանում է կամ ում հսկողության ներքո գտնվում է իրավաբանական անձը» (Պահանջ 2.5.գ.ii): Այսպիսով, դա կարող է ներառել անձի (անձանց), ով տնօրինում կամ հսկողության տակ է պահում բաժնետոմսերը կամ ձայնի իրավունքները բաժնետիրական ընկերությունում; անձի, ում բաժնետոմսերը ընկերությունում պահվում են մեկ ուրիշի անունով, կամ անձի (անձանց), որ այլ միջոցներով վերահսկում են ընկերության աշխատանքը՝ անկախ նրանից, թե արդյոք նրանք ունեն որևէ մաս ընկերության բաժնետոմսերում: Դա ներառում է նաև այն դեպքերը, երբ ընկերությունը չի հանդիսանում բաժնետիրական: Լիազոր անձը, նոմինալ սեփականատերը կամ մեկ այլ ընկերություն չեն կարող հանդես գալ որպես իրական սեփականատերեր:

ԱՃԹՆ-ի ստանդարտն այնուհետև նշում է, որ «ԲՇԽ-ը պետք է համաձայնության գա «իրական սեփականատեր» եզրի պատշաճ սահմանման հարցում»: Սահմանումը

պետք է համապատասխանեցվի ԱՃԹՆ-ի ստանդարտի վերոնշյալ սահմանմանը և հաշվի առնի միջազգային նորմերն ու համապատասխան ազգային օրենսդրությունը, ինչպես նաև ներառի սեփականության շեմը (շեմերը): Սահմանումը պետք է նաև նշի հաշվետվողականության պահանջները քաղաքական ազդեցություն ունեցող անձանց համար» (Պահանջ 2.5.գ.ի):

«Իրական սեփականություն» եզրի համապատասխան սահմանում մշակելու համար **խորհուրդ է տրվում, որ ճանապարհային քարտեզը ներառի այնպիսի գործողություններ, ինչպիսիք են վերլուծությունը, թե արդյոք ազգային օրենսդրությունը ներառում է «իրական սեփականատերերի» սահմանումը, այդ եզրի գոյություն ունեցող միջազգային և ազգային սահմանումների ուսումնասիրությունը և համապատասխան սահմանումների ու սեփականության շեմերի համաձայնեցումը՝ իրական սեփականության հաշվետվություններն ուժի մեջ մտցնելու համար:**

## ***Աղյուսակ 2. Փողերի վլացման դեմ ԵՄ 4-րդ դիրեկտիվի սահմանումներ***

(6) «Իրական սեփականատերը» այն ֆիզիկական անձն է (անձինք), որին իրականում պատկանում է կամ որը վերահսկում է հաճախորդին և (կամ) այն ֆիզիկական անձին (անձանց), ում անունից գործարքը կամ գործողությունն իրականացվում է, և առնվազն ներառում է հետևյալը.

(a) իրավաբանական անձանց դեպքում.

ֆիզիկական անձ (անձինք), ում իրականում պատկանում է կամ ով վերահսկում է իրավաբանական անձին՝ այդ կազմակերպությունում ուղղակի կամ անուղղակի մասնակցության միջոցով՝ բավարար քանակությամբ բաժնետոմսերի կամ քվեարկելու իրավունքների կամ բաժնեմասի, այդ թվում՝ ըստ ներկայացնողի բաժնետոմսերի տիրապետման կամ հսկողության այլ միջոցներով. կարգավորվող շուկայում չցուցակված ընկերության դեպքում անհրաժեշտ է բավարարել տեղեկատվության բացահայտման պահանջներին՝ ԵՄ օրենսդրությանը համապատասխան կամ առաջնորդվել համարժեք միջազգային չափորոշիչներով, որոնք ապահովում են սեփականության վերաբերյալ տեղեկատվության պատշաճ թափանցիկություն:

Ուղղակի մասնակցություն է համարվում ֆիզիկական անձի կողմից հաճախորդի 25% գումարած մեկ բաժնետոմսի կամ հաճախորդի ավելի քան 25% բաժնեմասի տիրապետումը: Անուղղակի մասնակցություն է համարվում իրավաբանական անձի կողմից հաճախորդի 25% գումարած մեկ բաժնետոմսի կամ հաճախորդի ավելի քան 25% բաժնեմասի տիրապետումը, երբ այդ իրավաբանական անձը գտնվում է միևնույն ֆիզիկական անձի (անձանց) կողմից հսկվող ֆիզիկական անձի (անձանց)

կամ բազմաթիվ իրավաբանական անձանց հսկողության տակ: Անդամ-պետություններն իրավունք ունեն սահմանելու մասնակցության կամ հսկողության ավելի ցածր տոկոսային շեմ: Բացի այդ, այլ միջոցներով հսկողությունը կարող է սահմանվել՝ համաձայն Եվրոպական պառլամենտի և խորհրդի 2013/34/ԵՄ դիրեկտիվի 22-րդ հոդվածի 1-5 կետերի չափանիշների (3),

(ii) եթե, բոլոր հնարավոր միջոցները սպառելուց հետո և այն պայմանով, որ չկան կասկածի հիմքեր, (i) կետով սահմանված անձ (անձինք) չեն բացահայտվել, կամ, եթե կա որևէ կասկած, որ բացահայտված անձը (անձինք) իրական սեփականատեր (սեփականատերեր) է, բարձրաստիճանի դեկլարացիայի պաշտոն (պաշտոններ) զբաղեցնող ֆիզիկական անձ (անձինք), պատասխանատու անձինք պարտավոր են վարել իրական սեփականատերերին բացահայտելու նպատակով ձեռնարկված գործողությունների գրառումները՝ ըստ (i) և սույն կետերի:

(b) տրաստի դեպքում.

(i) տրաստի հիմնադիրը,

(ii) հոգաբարձուն (հոգաբարձուները),

(iii) պաշտպանը, եթե առկա է,

(iv) շահառուները, կամ երբ իրավաբանական կազմավորումներից շահ ունեցող անհատները դեռ պետք է որոշվեն, այն անձանց դասը, ում հիմնական շահերից է ստեղծվել կամ գործում իրավաբանական կազմավորումը կամ կազմակերպությունը.

(v) ցանկացած այլ ֆիզիկական անձ, ով իրականում վերահսկում է տրաստը՝ ուղղակի կամ անուղղակի մասնակցության միջոցով կամ այլ միջոցներով.

(c) իրավաբանական անձանց դեպքում, ինչպիսիք են հիմնադրամները և տրաստների նման իրավաբանական կազմավորումները, ֆիզիկական անձը (անձինք), ովքեր զբաղեցնում են (b) կետում նշվածներին համարժեք կամ նմանատիպ պաշտոններ:

<http://eur-lex.europa.eu/legal->

[content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32015L0849&from=EN](http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32015L0849&from=EN)

#### **4.4. Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց**

##### **հաշվետվողականության պարտավորությունների քննարկում**

ԱՃԹՆ-ի ստանդարտը սահմանում է, որ «[իրական սեփականատերերի] սահմանման մեջ պետք է նշվեն նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հաշվետվողականության պարտավորությունները» (Պահանջ 2.5.գ.ii): ԱՃԹՆ-ի

կողմից մշակված իրական սեփականության մոդելի հայտարարագրի ձևը ներառում է դաշտեր՝ բացահայտելու համար, թե արդյոք իրական սեփականատերերից որևէ մեկը քաղաքական ազդեցություն ունեցող անձ (PEP) է, ներառյալ՝ տեղեկություններ պետական պաշտոնի և դերի մասին, կամ PEP համարվելու այլ պատճառների ու պաշտոնավարման ժամկետների մասին:

Ապահովելու համար, որ իրական սեփականության սահմանումը պարունակի PEP-երի համար հաշվետվողականության պարտավորություններ, **խորհուրդ է տրվում, որ ճանապարհային քարտեզը ներառի գործողություններ՝ ուղղված գործող PEP-երի ազգային սահմանումների և նրանց հաշվետվողականության պահանջների ուսումնասիրությանը, որպեսզի հստակեցվեն այդ ուղղությամբ ազգային քաղաքականության նպատակները և «իրական սեփականություն» եզրի սահմանումը համապատասխանաբար փոփոխվի:**

#### ***Աղյուսակ 4. Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց սահմանումներ***

##### **Փողերի լվացման դեմ եՄ 4-րդ դիրեկտիվ.**

(9) «Քաղաքական ազդեցություն ունեցող անձ» հասկացությունը նշանակում է ֆիզիկական անձ, ում վստահվել կամ վստահվում են հանրային բնույթի նշանակալից գործառույթներ և ներառում է հետևյալը.

- (a) պետությունների ղեկավարներ, կառավարությունների ղեկավարներ, նախարարներ և նախարարների տեղակալներ կամ օգնականներ,
- (b) խորհրդարանի կամ նմանատիպ օրենսդրական մարմինների անդամներ,
- (c) քաղաքական կուսակցությունների կառավարման մարմինների անդամներ,
- (d) բարձրագույն ատյանի դատարանների, սահմանադրական դատարանների կամ այլ բարձր դատական ատյանների անդամներ, որոնց որոշումները ենթակա չեն հետագա բողոքարկման, բացառությամբ արտակարգ հանգամանքների,
- (e) աուդիտորների դատարանի կամ կենտրոնական բանկերի խորհուրդների անդամներ,
- (f) դեսպաններ, գործերի ժամանակավոր հավատարմատարներ և զինված ուժերի բարձրաստիճան սպաներ,
- (g) պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամներ,
- (h) միջազգային կազմակերպության տնօրեններ, նրանց տեղակալներ և խորհրդի կամ համարժեք գործառույթ իրականացնող մարմնի անդամներ:

(a) - (h) կետերում նշված ոչ հանրային բնույթի գործառույթ չպետք է հասկացվի որպես միջին օղակի կամ ավելի կրտսեր պաշտոնյաներին վերաբերող:

<http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32015L0849&from=EN>

### **Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբ**

*Օտարերկրյա քաղաքական ազդեցություն ունեցող անձինք (PEP-երը)* անհատներ են, որոնց վստահվել կամ վստահվում են հանրային բնույթի նշանակալից գործառույթներ օտար երկրի կողմից, օրինակ՝ պետության կամ կառավարության ղեկավարներ, բարձրաստիճան քաղաքական գործիչներ, կառավարության բարձրաստիճան անդամներ, դատական կամ ռազմական պաշտոնյաներ, պետական սեփականություն հանդիսացող ընկերությունների բարձրաստիճան ղեկավարներ, քաղաքական կուսակցությունների կարևոր պաշտոնյաներ:

*Ներքին PEP-երը* անհատներ են, որոնց վստահվել կամ վստահվում են հանրային բնույթի նշանակալից գործառույթներ երկրի ներսում, օրինակ՝ պետության կամ կառավարության ղեկավարներ, բարձրաստիճան քաղաքական գործիչներ, կառավարության բարձրաստիճան անդամներ, դատական կամ ռազմական պաշտոնյաներ, պետական սեփականություն հանդիսացող ընկերությունների բարձրաստիճան ղեկավարներ, քաղաքական կուսակցությունների կարևոր պաշտոնյաներ:

*Անձանց շրջանակը, որոնց վստահվել կամ վստահվում են նշանակալից գործառույթներ միջազգային կազմակերպության կողմից, ընդգրկում է բարձրաստիճան կառավարչական թիմի անդամներին, այսինքն՝ տնօրեններին, նրանց տեղակալներին և խորհրդի կամ համարժեք գործառույթներ իրականացնող մարմնի անդամներին:*

PEP-երի սահմանումը չի տարածվում վերոհիշյալ կատեգորիաների միջին օղակի կամ ավելի կրտսեր պաշտոնյաների վրա:

### **ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիա**

Հոդված 52. «Անհատներ, ում վստահվել կամ վստահվում են հանրային բնույթի նշանակալից գործառույթներ, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներն ու մերձավորները»:

[https://www.unodc.org/documents/brussels/UN\\_Convention\\_Against\\_Corruption.pdf](https://www.unodc.org/documents/brussels/UN_Convention_Against_Corruption.pdf)

*Աղբյուր. Glossary of the FATF Recommendations*

<http://www.fatf-gafi.org/media/fatf/documents/reports/Guidance-transparency-beneficial-ownership.pdf>

## **4.5 Բացահայտման ենթակա փվյալների մանրամասնեցման մակարդակ**

ԱՃԹՆ-ի ստանդարտը նշում է, որ իրական սեփականության բացահայտումները «պետք է ներառեն իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնությունը (ինքնությունները), սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում սեփականության իրավունքը կամ

իրականացվում հսկողությունը» (Պահանջ 2.5.գ): Այնուհետև նշվում է, որ «իրական սեփականատիրոջ ինքնության մասին տեղեկություններում պետք է ներառվեն իրական սեփականատիրոջ անունը, քաղաքացիությունը և բնակության երկիրը, ինչպես նաև նշվեն քաղաքական ազդեցություն ունեցող անձանց անունները: Նաև խորհուրդ է տրվում, որ բացահայտվեն հանրային ծառայությունների համարանիշը, ծննդյան ամսաթիվը, բնակության կամ ծառայողական հասցեն և նրա հետ կապի միջոցները» (Պահանջը 2.5.դ):

**ԱՃԹՆ-ի իրական սեփականության օրինակելի հայտարարագրի ձևը<sup>2</sup> ներառում է 2.5.դ կետի պահանջներում թվարկված բոլոր տեղեկությունները: Այն նաև պահանջում է ընկերություններից ցույց տալ, թե ինչ ճանապարհով է սեփականության իրավունքն իրացվում և վերահսկողությունը գործադրվում՝ արդյոք բաժնետոմսերի, քվեարկության իրավունքների կամ այլ միջոցներով՝ համաձայն 2.5.գ պահանջի: **Խորհուրդ է տրվում, որ ճանապարհային քարտեզը ներառի գործողություններ՝ ուղղված կառավարության, քաղաքացիական հասարակության և ընկերությունների հետ խորհրդակցելուն՝ իրական սեփականության բացահայտումների լրացուցիչ մանրամասնեցման մակարդակի հետ կապված, այդ թվում՝ առաջարկվող՝ բացահայտման ենթակա տեղեկատվության (ինչպիսիք են ծննդյան ամսաթիվը և կապի միջոցները) հետ կապված հնարավորությունները և մարտահրավերները: Ճանապարհային քարտեզը կարող է նաև նշել, թե արդյոք ԲՇԽ-ը մտադիր է օգտվել ԱՃԹՆ-ի իրական սեփականության օրինակելի հայտարարագրի ձևից՝ գուցե որոշ տեղական ադապտացիաների ենթարկելուց հետո, կամ թե արդյոք ԲՇԽ-ը մտադիր է մշակել իր սեփական հայտարարագրի ձևը:****

#### **4.6 Տվյալների հավաքագրման ընթացակարգերի քննարկում**

2.5.գ պահանջը սահմանում է, որ «2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ պահանջվում է, որ իրականացնող երկրները հարցում անեն, իսկ ընկերությունները բացահայտեն իրական սեփականության մասին տեղեկությունները՝ **ԱՃԹՆ-ի զեկույցի մեջ դրանք ներառելու նպատակով**» (ընդգծումն ավելացված է): Բացի այդ, 2.5.ա պահանջը սահմանում է հետևյալը. «Խորհուրդ է տրվում, որ իրականացնող երկրները վարեն հանրության համար հասանելի՝ արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ ներկայացրած, այդ ոլորտում գործող կամ ներդրում կատարած իրավաբանական անձի (անձանց) իրական սեփականատերերի ռեգիստր՝ ներառելով իրենց իրական սեփականատիրոջ (սեփականատերերի) ինքնությունը (ինքնությունները), սեփականության պատկանելության աստիճանը և մանրամասներ այն մասին, թե ինչպես է իրացվում

<sup>2</sup> <https://eiti.org/document/tools-to-include-beneficial-ownership-disclosure-in-eiti-reporting>

սեփականության իրավունքը կամ իրականացվում հսկողությունը: Հնարավորության դեպքում, ընկերությունների կողմից իրական սեփականության վերաբերյալ տեղեկությունները պետք է ընդգրկվեն ընկերությունների կողմից՝ արդյունահանող ճյուղերը կանոնակարգող մարմիններին, ֆոնդային բորսաներին և լիցենզավորման գործընթացի լիազոր գործակալություններին ներկայացվող փաստաթղթերում: Այն դեպքերում, երբ այս տեղեկությունները հանրությանը հասանելի են, ԱՃԹՆ-ի զեկույցի մեջ պետք է ներառվի ցուցում այն մասին, թե ինչպես գտնել այդ տեղեկատվությունը»:

Տվյալների հավաքագրման ընթացակարգերը քննարկելիս անհրաժեշտ է նշել, որ իրական սեփականության բացահայտման պահանջը տարածվում է ցանկացած ընկերության վրա, որը «արդյունահանող ոլորտում գործունեություն իրականացնելու հայտ է ներկայացրել, այդ ոլորտում գործում է կամ ներդրում է կատարում» (Պահանջ 2.5.գ): Սա նշանակում է, որ ԲՇԽ-ը, ամենայն հավանականությամբ, իրական սեփականության բացահայտման նպատակով հնարավոր է թիրախավորի ընկերությունների ավելի լայն շրջանակի, քան ԱՃԹՆ-ի զեկույցի շրջանակներում ֆինանսական հաշվետվողականության նպատակով ընդգրկված ընկերությունները: **Խորհուրդ է տրվում, որ ճանապարհային քարտեզը ներառի գործողություններ, որոնք ուղղված են այն ընկերությունների սահմանում, որոնք պետք է մասնակցեն իրական սեփականության հաշվետվողականության մեջ: Գնահատականային քարտեզը կարող է նաև ներառել խորհրդատվական աշխատանքներ՝ ուղղված տվյալների հավաքագրման առավել արդյունավետ և կայուն մոտեցման բացահայտմանը:** Սա կարող է ներառել իրական սեփականատերերի հայտարարագրերի ձևերի տարածումը բոլոր համապատասխան ընկերությունների շրջանում կամ իրական սեփականատերերի բացահայտման պահանջների ընդգրկումը արդեն առկա բացահայտման պարտավորությունների մեջ՝ մրցութային փաստաթղթերի, ինչպես նաև ընկերությունների կողմից տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամանակ և այլն: Թեև բոլոր ընկերությունները, վերջին հաշվով, պետք է բացահայտեն իրենց իրական սեփականատերերին, խոշոր արդյունահանող ոլորտներ ունեցող երկրները կարող է սկզբում ցանկանան սահմանել առաջնահերթություններ և թիրախավորել ամենակարևոր ընկերություններին՝ կախված տեղական պայմաններից, և աստիճանաբար ընդլայնեն հաշվետվողականությունը՝ նպատակ ունենալով մինչև 2020թ. ընդգրկել բոլոր ընկերություններին:

#### **4.7 Տվյալների ճշգրտության ապահովման նպատակով մեթոդաբանության մշակման քննարկում**

ԱՃԹՆ-ի ստանդարտը սահմանում է. «ԲՇԽ-ը պետք է համաձայնության գա մասնակից ընկերությունների հետ կապված այնպիսի մոտեցման հարցում, որը

հնարավորություն կտա ապահովելու նրանց կողմից տրամադրվող՝ իրական սեփականության մասին տեղեկությունների ճշգրտությունը: Կազմակերպություններին կարող է պահանջ ներկայացվել՝ ստորագրելու իրական սեփականության հայտարարագիրը բարձրաստիճան ղեկավարության թիմի անդամի կամ ավագ իրավախորհրդատուի կողմից կամ ներկայացնելու հիմնավորող փաստաթղթեր» (Պահանջ 2.5.ե): Իրական սեփականության վերաբերյալ ԱՃԹՆ-ի աշխատանքի արժանահավատության համար կարևոր է բացահայտվող տեղեկատվության ճշգրտությունն ապահովող որևէ մեխանիզմի առկայությունը, այլապես հնարավոր չի լինի վստահ լինել, որ բացահայտված իրական սեփականատերերը իսկապես իրական սեփականատերերն են և ոչ թե փոխարինող, նոմինալ կամ լիազոր անձինք: Տվյալների հուսալիությունն ապահովող մեխանիզմը պարտադիր չէ, որ պաշտոնական իրավական կիրարկում պահանջի, թեև դա էլ է տարբերակ, երբ հանրության համար հասանելի տեղեկատվության տրամադրելուց հետո այլ շահագրգիռ կողմերը, ինչպիսիք են իրավապահ մարմինները, քաղաքացիական հասարակությունը և այլ ընկերությունները, կկարողանան վիճարկել կասկածելի տեղեկությունները:

**ԲՇԽ-ը պետք է համոզվի, որ ճանապարհային քարտեզն ուրվագծում է ցանկացած գործողություն, որ ԲՇԽ-ը մտադիր է ընկերությունների համար համապատասխան մեխանիզմ քննարկել և համաձայնեցնել նախքան տվյալների հավաքագրումը՝ հավաստիանալու համար, որ իրական սեփականության հայտարարագրերում տվյալները կգետեղվեն, մասնավորապես, այն երկրներում, որտեղ իրական սեփականության բացահայտումը օրենքի պահանջ չէ:** Ընկերության բարձրաստիճան ղեկավարներից մեկի կողմից ստորագրված ստանդարտ հայտարարագիրը, որը հավաստում է, որ ներկայացված տեղեկատվությունը ճիշտ է, կարծես թե, աշխատող մեխանիզմ է, ինչը արտացոլվում է իրական սեփականության օրինակելի հայտարարագրի ձևում: Կարող է քննարկվել նաև հավաստում տրամադրող անձի անվան և պաշտոնի բացահայտման հարցը: Անհրաժեշտության դեպքում ընկերություններից կարող է նաև պահանջվել ներկայացնել աջակցող փաստաթղթեր (կանոնադրությունը, լիազորագրերը և այլն): Իրական սեփականության որոշ հայտարարագրեր կարող են նաև խաչաձև ստուգման ենթարկվել՝ համեմատելով իրավաբանական անձանց կողմից տեղական մակարդակով տրամադրված տեղեկատվության կամ կառավարության պաշտոնյաների բացահայտման պահանջներում ներառված ներկայացվող տեղեկատվության հետ (հնարավորության դեպքում):

#### **4.8 Տվյալների ժամկետայնության քննարկում**

ԱՃԹՆ-ի ստանդարտի՝ տվյալների ժամկետայնությանը վերաբերող 4.8 պահանջը սահմանում է, որ «իրականացնող երկրները պետք է բացահայտեն ոչ ավելի, քան



երկու տարվա վաղեմություն ունեցող տվյալներ, օրինակ՝ 2016 օրացուցային (ֆինանսական) տարում հրապարակված ԱՃԹՆ-ի զեկույցը պետք է հիմնված լինի 2014 օրացուցային (ֆինանսական) տարուց ոչ ավելի հին տվյալների վրա: ԲՇԽ-ներին խրախուսվում է ուսումնասիրել տվյալների՝ հնարավորինս սեղմ ժամկետներում բացահայտման հնարավորությունները: Օրինակ՝ տվյալների բացահայտումները կատարել շարունակական առցանց եղանակով կամ, որտեղ հնարավոր է, լրացուցիչ, ավելի թարմ ԱՃԹՆ-ի բովանդակային տվյալներ հրապարակելու միջոցով (ԱՃԹՆ-ի՝ եկամուտների մասին տվյալների հաշվետու ժամանակահատվածից դուրս)»:

Թեև իրական սեփականության պահանջները շրջանցում են տվյալների ժամկետայնության հարցը, **խորհուրդ է տրվում, որ ճանապարհային քարտեզը ներառի գործողություններ՝ ուղղված իրական սեփականության տեղեկատվության տվյալների հավաքագրման ամենահարմար ժամանակի ուսումնասիրությանը:** Օրինակ, ընկերությունների համար կարող է նպատակահարմար լինել ներկայացնել նման տեղեկատվությունը երկրում իրավաբանական անձի գրանցման ժամանակ, արդյունահանման ոլորտում թույլտվություններ ստանալու համար մրցույթների մասնակցելիս, պայմանագիր կամ լիցենզիա կնքելիս, կամ հանքարդյունաբերության ոլորտում իրենց գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվություններ ներկայացնելիս: Իրական սեփականության օրինակելի հայտարարագրի ձևը պահանջում է, որ հաշվետվություն տրամադրող անձինք հաստատեն սեփականատերերին կոնկրետ ամսաթվով, որը պետք է սահմանվի ԲՇԽ-ի կողմից: Նաև պահանջվում է, որ յուրաքանչյուր ընկերություն բացահայտի ամսաթիվը, երբ իրենց սեփականատերերի բենեֆիցիար իրավունքը ձեռք է բերվել:

**ԲՇԽ-ը կարող է նաև ցանկանալ քննարկել, թե ինչպես արտացոլել ժամանակի ընթացքում կատարվող սեփականության փոփոխությունները՝ ելակետային տեղեկություններն ունենալուց հետո:** Պրակտիկ մոտեցում կարող է լինել այն, որ ընկերություններից մեկ անգամ պահանջվի բացահայտել իրական սեփականատերերին: Հետագա բացահայտումները կարող են տրամադրվել միայն իրական սեփականատիրոջ փոփոխության դեպքում՝ սահմանված ժամկետներում տեղեկատվության կանոնավոր ներկայացնելու փոխարեն: Իրական սեփականության բացահայտմանն ուղղված օրենսդրական և կարգավորիչ բարեփոխումների դեպքում ընկերություններից կարող է պահանջվել ներառել իրական սեփականության ցանկացած փոփոխության բացահայտումը և ներկայացնել առնչվող տեղեկությունները որոշակի սահմանված ժամկետներում (օրերում):

#### 4.9 Տվյալների հասանելիության քննարկում

Տվյալների հասանելիության վերաբերյալ ԱՃԹՆ-ի 7.2 պահանջը սահմանում է, որ ԲՇԽ-ը խրախուսվում է ԱՃԹՆ-ի զեկույցները կազմել մեքենայաընթեռնելի ձևաչափով, կոդավորել կամ թեգ անել (tag) ԱՃԹՆ-ի զեկույցներն ու տվյալների ֆայլերը այնպես, որ տեղեկատվությունը հնարավոր լինի համեմատել հրապարակայնորեն հասանելի այլ տվյալների հետ՝ ընդունելով Խորհրդի կողմից հաստատված ԱՃԹՆ-ի տվյալների չափանիշներ»։ Ստանդարտը նաև պահանջում է, որ ԲՇԽ-ը «ԱՃԹՆ-ի զեկույցը առցանց հասանելի դարձնի բաց տվյալների ձևաչափով (xlsx կամ csv) և հանրայնացնի դրա հասանելիությունը» (Պահանջ 7.1.գ)։ Pdf ձևաչափով ներկայացված, իրական սեփականության վերաբերյալ տեղեկություններ պարունակող աղյուսակները, հնարավոր է, դժվար լինի հասկանալ և մեկնաբանել, մասնավորապես, երբ կան ընկերությունների բազմաթիվ մակարդակներ արդյունահանման ոլորտում աշխատող ընկերության և վերջնական շահառուի միջև։ **Խորհուրդ է տրվում, որ ճանապարհային քարտեզը ներառի գործողություններ՝ ուղղված տվյալների հասանելիության մակարդակի բարձրացմանը, օրինակ, տվյալների հրապարակում էլեկտրոնային ձևաչափերով։ Դա կարող է նաև ներառել գործողություններ՝ ուղղված իրական սեփականատերերի հանրային ռեգիստրի ստեղծման քննարկմանը, որը լավագույն տարբերակում ինտեգրված կլինի իրավաբանական անձանց կամ արդյունահանման թույլտվությունների առկա ռեգիստրներում։** Թեև իրական սեփականության վերաբերյալ ԱՃԹՆ-ի պիլոտային ծրագիրը պարզել է, որ իրական սեփականատերերի վերաբերյալ տեղեկատվությունը, որպես կանոն, չի հավաքագրվում պետական մարմինների կողմից, օրենսդրական պահանջների և իրավաբանական անձանց գործող ռեգիստրներում պարունակվող տեղեկատվության ըմբռնումն օգտակար ելակետ է ԲՇԽ-ների համար, որ ցանկանում են հանրության համար բաց իրական սեփականության ռեգիստրներ ստեղծել և ներառել տեղեկատվության նման բացահայտումները։

#### 4.10 Կարողությունների զարգացման կարիքների քննարկում

ԱՃԹՆ-ի ստանդարտի 1.5.գ կետը ԲՇԽ-ից պահանջում է «գնահատել և ձևակերպել պետական մարմինների, ընկերությունների և քաղաքացիական հասարակության կարողությունների հնարավոր այնպիսի սահմանափակումների հասցեագրման պլանները, որ կարող են լուրջ խոչընդոտ հանդիսանալ ԱՃԹՆ-ի արդյունավետ իրականացման համար»։

Իրական սեփականության բացահայտումների փորձը ցույց է տալիս, որ բոլոր շահագրգիռ կողմերի շրջանում առկա է իրական սեփականության առնչությամբ տեղեկացվածության և փորձի զգալի պակաս։ Իրավական և իրական

սեփականությունների տարբերակման պակասը զգալի շփոթություն է առաջացրել՝ կանխելով իրական սեփականության մասին հաշվետվություններում համապարփակ և ճշգրիտ բացահայտումները: **Խորհուրդ է տրվում, որ ԲՇԽ-ը քննարկի կարողությունների զարգացման և իրազեկվածության մակարդակի բարձրացման արշավների՝ ճանապարհային քարտեզում ներառումը կամ գործողություններ, որոնք ուղղված կլինեն բացահայտելու կարողությունների զարգացման կարիքները: Շատ երկրներում կարող է անհրաժեշտ լինել սկսել իրազեկվածության բարձրացման պարզ արշավից՝ բացատրելու, թե ինչ է իրական սեփականությունը:** Սա կարող է լրացվել համապատասխան պետական մարմինների՝ ավելի տեխնիկական կարողությունների զարգացմամբ, օրինակ՝ իրական սեփականությանն առնչվող օրենքի կիրարկում, իրական սեփականության ռեգիստրի ստեղծում և պահպանում, ստուգման մեխանիզմներ, ընկերությունների հետ հաղորդակցություն և այլն: Ընկերությունների կարողությունների զարգացումը կարող է անհրաժեշտ լինել՝ ապահովելու համար իրական սեփականության հաշվետվությունների ներկայացման հետ ծանոթացումը, տրամադրելու համար իրական սեփականության նախնական տեղեկությունները նույնականացնելու և հավաքագրելու վերաբերյալ ցուցումներ, ինչպես նաև ընթացակարգեր և համակարգեր՝ տվյալները թարմացնելու և պետական մարմիններին ներկայացնելու համար: Քաղաքացիական հասարակության կարողությունների զարգացումը կարող է կենտրոնանալ իրական սեփականության վերաբերյալ տվյալների և ժամանակի ընթացքում դրանց փոփոխությունների հանրային մոնիտորինգի վրա, ինչպես նաև այն բանի վրա, թե ինչպես կարելի է օգտագործել իրական սեփականության վերաբերյալ տեղեկատվությունը շահերի պաշտպանության ու արշավների ժամանակ և այլն:

#### ***4.11 Տեխնիկական և ֆինանսական աջակցության կարիքների քննարկում***

ԱՃԹՆ-ի ստանդարտի 1.5.դ կետը ԲՇԽ-ից պահանջում է «նպատակահարմարության դեպքում պարզել ֆինանսավորման և տեխնիկական աջակցության ներքին և արտաքին աղբյուրներ՝ համաձայնեցված աշխատանքային պլանը ժամանակին իրականացնելու համար»: **Խորհուրդ է տրվում, որ ԲՇԽ-ը նախապես նշի ճանապարհային քարտեզի իրականացման ֆինանսավորման աղբյուրները: Ծանապարհային քարտեզը կարող է նաև պարունակել գործողությունների ծախսերի նախահաշիվներ և մատնանշել, թե ինչպես են դրանք ֆինանսավորվելու: ԲՇԽ-ը կարող է նաև ցանկանալ ներառել գործողություններ՝ ուղղված իրական սեփականության պահանջի իրականացման նպատակով հետագա ֆինանսավորում ապահովելուն, և ցույց**

տալ, թե որ գործողությունների համար է ԲՇԽ-ը տեխնիկական աջակցության կարիք զգալու:

#### 4.12 Ճանապարհային քարտեզում ներառված գործողությունների վերջնաժամկետների և պարտականությունների քննարկում

ԱՃԹՆ-ի ստանդարտը նշում է, որ «ԲՇԽ-ը ճանապարհային քարտեզում պետք է սահմանի բոլոր ուղենիշները և վերջնաժամկետները, ինչպես նաև գնահատի ճանապարհային քարտեզի իրականացումը՝ որպես ԲՇԽ-ի տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մաս» (Պահանջ 2.5.բ.ii): **Խորհուրդ է տրվում, որ ճանապարհային քարտեզը ներառի չափելի և ֆիքսված ժամանակային պարտավորություններով գործողություններ, և որ ճանապարհային քարտեզը տարբեր գործողությունների համար սահմանի պարտականություններ: ԲՇԽ-ը կարող է քննարկել աշխատանքային խմբի ստեղծման հարցը՝ վերահսկելու համար ճանապարհային քարտեզի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև կառավարությանը և ԲՇԽ-ին պարբերաբար աշխատանքների իրականացման մասին հաշվետվություններ ներկայացնելու համար: Ճանապարհային քարտեզը ԲՇԽ-ի կողմից պետք է հաստատվի և հանրության համար հասանելի դառնա մինչև 2017 թվականի հունվարի 1-ը:**

## 5. Գրականություն

- EITI, *Beneficial ownership pilot evaluation report*, [https://eiti.org/sites/default/files/documents/BP/board\\_paper\\_30-4-b\\_beneficial\\_ownership\\_pilot\\_-\\_evaluation\\_report.pdf](https://eiti.org/sites/default/files/documents/BP/board_paper_30-4-b_beneficial_ownership_pilot_-_evaluation_report.pdf)
- EITI, *Beneficial ownership fact sheet 2016*, <https://eiti.org/document/beneficial-ownership-fact-sheet>
- EITI, *Beneficial ownership model declaration form*, <http://eiti.org/files/Template%20beneficial%20ownership%20declaration%20form.doc>
- NRG, *Owning Up: Options for Disclosing the Identities of Beneficial Owners of Extractive Companies*, [https://resourcegovernance.org/sites/default/files/documents/nrgi\\_beneficial\\_owners20150820.pdf](https://resourcegovernance.org/sites/default/files/documents/nrgi_beneficial_owners20150820.pdf)
- UK Department for Business Innovation & Skills, *Transparency & Trust: Enhancing the transparency of UK company ownership and increasing trust in UK business: Government response*, [https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/304297/bis-14-672-transparency-and-trust-consultation-response.pdf](https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/304297/bis-14-672-transparency-and-trust-consultation-response.pdf)
- UK Department for Business Innovation & Skills, *Consultation stage impact assessments*, [https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/303555/bis-14-670-part-a-of-transparency-and-trust-proposals-impact.pdf](https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/303555/bis-14-670-part-a-of-transparency-and-trust-proposals-impact.pdf)

## **Annex A: Advisory checklist for beneficial ownership roadmap**

### **Institutional framework for beneficial ownership disclosure**

*Has the multi-stakeholder group considered whether the roadmap should include activities aimed at...*

- consultations with government agencies in order to identify the agency(ies) that is responsible or could best suited to oversee, collate and maintain beneficial ownership information?
- reviewing any legal, regulatory or practical barriers to disclosure of beneficial ownership?
- undertaking legal reviews and amendments with a view to incorporate requirements for beneficial ownership disclosure in relevant law(s)?

### **Beneficial ownership definitions**

*Has the multi-stakeholder group considered whether the roadmap should include activities aimed at...*

- reviewing whether national laws include a definition of beneficial owners?
- reviewing existing international definitions and definitions used in other countries?
- agreeing an appropriate definition and ownership thresholds in order to operationalize reporting of beneficial ownership?

### **Politically exposed persons**

*Has the multi-stakeholder group considered whether the roadmap should include activities aimed at...*

- investigating existing national definitions and reporting requirements for PEPs with a view to align the beneficial ownership definition accordingly?

### **Level of disclosure details and data reliability**

*Has the multi-stakeholder group considered whether the roadmap should include activities aimed at...*

- consultation with government, civil society and companies with a view to determine the level of detail of the beneficial ownership disclosures (nationality, country of residence, level of ownership, how ownership is exerted, date of birth, residential address, means of contact, etc.), including opportunities and challenges with such disclosures ?
- identifying an appropriate mechanism for companies to assure the data in the beneficial ownership declarations prior to data collection?

### **Data timeliness**

*Has the multi-stakeholder group considered whether the roadmap should include activities aimed at...*

- reviewing what would be the most appropriate time for data collection of beneficial ownership information ?

- how to reflect changes in ownership over time, once a baseline has been established?

### **Data collection procedures and data accessibility**

*Has the multi-stakeholder group considered whether the roadmap should include activities aimed at...*

- identifying the companies that will be required to participate in beneficial ownership reporting?
- identifying the most efficient and sustainable data collection approach, including for example developing a beneficial ownership declaration form, or adaptation of the EITI's model beneficial ownership declaration form as tools for collecting beneficial ownership data?
- increasing data accessibility, for example by publication of data in electronic or other open data formats?
- considering establishing a public beneficial ownership register, ideally integrated in existing corporate or extractive license holder registers?

### **Capacity building, and technical and financial assistance**

*Has the multi-stakeholder group considered whether the roadmap should include activities aimed at...*

- capacity building and awareness raising campaigns, and/or actions aimed at identifying capacity building needs ?
- identifying funding for the implementation of the roadmap and further funding for implementation of the beneficial ownership requirements on an ongoing basis ?

### **Deadlines and responsibilities for roadmap activities**

*Has the multi-stakeholder group made sure that the roadmap..*

- includes measurable and time bound activities ?
- assigns responsibilities for the various activities?
- estimates the cost of the activities and identifies funding sources?
- considers whether it is necessary to establish a working group to oversee the development and execution of the roadmap ?